

ԳԵՂԱՐՈՒԵՍՔ

ՃԱՇԱԿ ՔԱՆԴԱՎԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՐԱԿԵԱՆ ԵՂԲԱՐՑ

Ի Տ Ա Լ Ա Ց Ի Ռ Ց

Արդէմ համբածամօթ է գեղարուեստից Խասալիոյ մէջ ումեցած մեծ յառաջալիւ մութիւնն, որոց միթէւ ամզամ դայեակ և դաստիարակ կոչուելու արժանաւորութիւնն ումեցեր է այդ աշխանքի. և ցայսօր ամուաթի թերթեր նույրած եմ՝ նոցա իւր մէջ ումեցած զարգացման զաղափարը տարածելու համար: Նոյնպէս յայտնի է աղդէմ, թէ օր լստ օրէ զարգացող մեր զիտնական չայ որեարթ որբամ լսու նամաչեր է նորա այդ յառաջալիւթեամ բազմազիմի օգուտմերը, և ինչ մեծ համութեամբ կը կարդայ և կը մկանէ նորա արտադրած հրաշալիքը. այնպէս որ ուրախութեամբ կրնաճք ըսել, թէ իմքը իսկ հետամուտ է գեղարուեստից, մասամադէ թէ ամոնց մէջ ումեցած յաջողակութեամ և զարգացման գովելի ցոյցերթ իսկ սկսեր է տալ: Ուստի համութեամբ զիտելով այդ զեղեցիկ և ազմուացուցիչ ըթիացքը, մեր թերթի ըմթերցողաց կը շամանք ըմծայել հետզհետէ նոյն սազին նուրբ և փափուկ գեղարուեստից այլեւայլ նոր ճաշակները, տոհմայինն են քամ զեւս խրախուսելու յուսով մերովսամ:

ԲՏԱԼԻՈՅ հարաւային գաւառաց մէջ շատ տարածուած է՝ Փրանկիսկոս և Վինկենա Երակեան եղարաց և երեւելի քանդակողաց համբաւն, որ ծնած կալարքիոյ Պողիստենա քաղաքին մէջ՝ բնակութեամբ նէապոլոյ մէջ հաստառուած են: իրենց հոչակին համեւնառ՝ երկուքն այլ բաւական շատ և գեղեցիկ ու յարգելի գործեր ընծայած են ազգին, և իրաւամբ՝ անոր և օտարաց իսկ զարմանքն ու համակրանքը զրաւած:

Փրանկիսկոսի գործոց մէջ ամենէն աւելի ընաիր և զգայուն համարուած է և է արդեամբ՝ կարմուխնա ըստած կներայ կիսանզրին, ինչպէս վարը դրուած պատկերն կը ցուցընէ. զոր մենք այլ սակաւ ինչ երկար քննենք՝ անդրազարձընելով հեղինակին ճաշակի և արուեստին փափկութիւնը: Բայց որովհետեւ արձանին լրայ արուեստորէն բացատրուած ախուր զգացմունքն ըմբռունելու համար, յորում կը փայլի Փրանկիսկոսի ճարտարութիւնն և կը օրանշացուի, հարկաւոր է գոնէ հարեւանցի անոր պատմութիւնը գիտնալ, անոր հա-

մար դնենք հօս զայն համառօտիւ, քաղելով՝ Բոկացիոսի Տասմօրէք ըտուած գրուածքին՝ վերջին օրուան եօթներորդ վիպէն, յորմէ արդէն տուած և Ալփ-րէտ դէ Մուսէտ փրանկ թատրերգուն այլ՝ իւր սրուաշարժ և բարյական զգացւ մամբ լի քերդութիւնը յօրինելու համար. որոյ կրկին ու կրկին ընթերցմամբ ազդուած և վասուած փրանկիսկո՞ ընծայեց ուստումնական աշխարհի պյս ար-ժանաւոր դործը :

Կարմոսինա՞ ըստ Ալփրետի, և Լիսա՞ ըստ Բոկաչիոսի, պալերմոցի բը-ժըշի մ՞աղջիկ էր, ծնողաց միակ յոյս և միսիթարութիւն՝ իւր համեստ ու տուարինի վարորդ և առողջ ու զեղեցիկ տեսքով. որ կամաց հասակն առնըլով ու վայելով օրիորդ մի զառնալով, բարի ծնողքն մեծ ուրախութեամբ կը սպասէին մի օր զինքը արժանաւոր կենակցի մի վիճակեցընել, անոնց յանձնելով իրենց ծերութիւնն ու բոլոր ունեցածնին։ Բայց անա օր մի կարմոսինան սեւնելով պատուհանէն զՊետրո Ալրագոնայ թագաւորը, որ իւր ընտրութեան հանգէսներու ժամանակ՝ իշխանաց հետ զինախոսզ կ'ընէր, և ախործով զիսելով՝ սիրոն ու սէրը սաստիկ անոր յարեցաւ. այլ միեւնոյն ժամանակ յաւ ըմբունելով իւր ցածրութիւնը և թագաւորին բարձրութիւնը, ո-րով և իւր կեանքը անոր հետ միացընելու բացարձակ անկարելութիւնը, և անհամեմատ ամօթ զզալով՝ որ եւ է անձին՝ թող թէ իւր վեհ սիրելոյն սրտին խեղմ զիճակը իմացընել, յանկարծ իրեն համար աշխարհն մթնեցաւ, կեանքը ձանձրանալի դարձաւ, զզաց որ միայն մահն զինքը եղանակի կ'ընէր, ըզձաց և ուզեց մեռնիլ, և արգեամբ ալ այնպէս պիտի լինէր։ Այն օրէն սրո սաստիկ ջերմութենէ և մորի անդապար սեւեռունպէն՝ կարմոսինայի վրայ տկարութիւն մ'եկաւ, քանի մ'օրէն անկոզին ընկաւ և օր օրուան վրայ ա-ւելի մաղձուաելով ու հիւծելով՝ կատարեալ մահուան պատկեր մի դարձաւ, տժգոյն և ախուոր, թշուառ ծնողքը՝ ցաւոց ծովի մէջ ընկզմած և բժիշկներէն միսիթարութիւն մի շառնելով, ինչ ընենին չէին գիտեր։ — Այն ժամա-նակներ նոյն կողմեր ամենուն ծանօթ՝ քնարով խաղ ըսող մի կար, Մինու-կիսու անսունով, որ իւր զուարիթ բնութեան և ախործելի եղանակներու հա-մար, յաճախ արցունիքն այլ եղած ու մտած էր, մահաւանդ մեղաներու, և թագաւորին ծանօթ ու սիրելի։ Տեսնելով կարմոսինա որ մահն կը մօսենայ, և պիտի մեռնի այնպիսի անձի մի սիրոյն համար, որ զինքը չի ճանշնար և չի գիտեր իւր ինչո՞ւ մեռնիլը, զառն ու անսունելի դարձաւ իրեն այն մահը, որոյ իրբեւ երջանփութեան կը փափագէր. կ'ուզէր մեռնիլ, բայց կ'ուզէր նախ սրտանց՝ իւր սէրը թագաւորին գոնէ կերպով մի յայտնել, և այն ա-ւեն քաղցր էր իրեն մեռնիլ. բայց որո՞յ ձեւցով, որո՞ւմ վաստանալ և իրբու հաւատարիմ ու զաղտնապահ թարգման՝ թագաւորին զրկել, այս էր զժուարին և զբեթէ անկարելի տեսնուածը. այլ սէրը հնարք մի գտաւ։ Օր մի կարմոսինան դարձաւ և իւր տիտոր ծնողաց անուշ աղաշներով մ'ըստ. Ա՞հ, սիրելիք, ձեզի ինոփր մ'ունիմ, կատարեցէր, զի քանի որ չեմ մե-սած՝ մի անդամ Մինսկիսը քովս կոչեցէր, որ իւր անուշ քնարով քանի

մի խաղ ըստ ու ցաւերս թեթեւցընէ . — խեղճ ծնողքն իրենց դուռեր հանոյց մ'ընելու համար՝ ամէն ջանք ըրին, և երկրորդ օրը տուն հրաւիրեցին՝ ինքն այլ սիրով եկաւ . և յետ առկաւ ինչ խօսակցութեան և առողջութեան յոյս տալու և խրախուսելու, սկսաւ իւր զգայուն քնարախաղը՝ փափուկ և անուշ շեշտ ու իմաստով, և այս այնշափ առելի եռանդեամբ՝ որչափ որ սիրան ու կարեկցութիւնը շարժած էր թշուառ ծնողաց և օրհասական կարմուխնայի վրայ՝ որ ի ծաղկին կը թառամէէր . բայց հիմանդն առելի եւս վասուած և սիրոն ի սիրոյն ճնշուած, բանեց Մինուկիսով թեւը և ըստ . Ա՛հ, բարեսիրա Մինուկէ, դու զիս կ'ուզես միմիթարել ու զուրդացընել, այլ ես առելի եւս կը ամբիմ ու դառն դշտերով կ'ընկծիմ . բայց ես քեզի ինսդիր մ'ունիմ, քեզմէ օգնութիւն մի կը խնդրեմ, զոր եթէ ուզես՝ զու միայն կրնաս ընել, և այնու զիս առելօք միմիթարել և զուցէ առողջութիւնն ալ պատճառել, և զիս՝ ողջ թէ մեռած՝ յափուեան քեզի երախտապէտ տասնալ . սակայն գաղտնիք մ'է իննդիրս, դոր քեզ միայն կրնամ յայտնել և ոչ ուրիշի : Եւ երբ կամաց կամաց այլք քայուեցան և երկուքն տառնձին մնացին, կարմուխնան խորին հառաջ մ'արձակելէն վերջ՝ պատմեց Մինուկիսով, իւր սրտին անհամեմատ կոկիծ և ցաւ պատճառող սիրոյն գաղտնիքը, թէ ի'նչպէս յանկարծակի կայծած էր, և իսկոյն անպատճենութիւնն այլ իմացած լինելով՝ բաւական եղած չէր ոչ միայն շինեցընել, այլ և չափարել իսկ, և թէ ինչպէս անձի մ'ալ յայնել չհամարձակելով՝ ոչ զոյ յարմար գտած լինելով իւր իդար լրացընելու, ծայրապյն անձկութեամբ տանջուած՝ երազ ի մահ կը դիմէէր՝ որյ սակայն սրտանց կը փափագիմ, միայն թէ գֆայ վրաս, ո՛վ ազնիւ Մինուկէ, և մեռնելէս տուած՝ զնայ, սլացիր և պարզ իմացուր իմ վեհ սիրելոյս, թէ կարմուխնան քեզ սեսաւ, սիրեց անմեղութեամբ և քեզ համար կը մեռնի, և ապա քաղցր է ինձ մահ և ըղձալի գերեզմանի անզորութիւն :

Զայս լմելով Մինուկիս, կարեկցութեամբ լեցուած, խոստացաւ հաւատարիմ գաղտնապահութիւն և ամէն ջանք առածը կատարելու, ապահովցընելով զինքը՝ երեք օրէն ուրախ բայր բերելուն, և ժամանակ շխրսընցընելու համար, ողջունեց և խսկոյն մեկնեցաւ, երկուքն այլ յուսով իրարմէ բաժնուելով : — Այս օրէն արդէն Մինուկիսու ուզած իմաստով քսան քսանուհինդ տող տուաւաւը բան յարմարել տուած էր, և ինքն սկսած զգայուն եղանակ մի յարմարցընել . երբորդ օր յանկարծ արդունիքը երեւելով՝ սեղանի կանչուեցաւ իւր ծանօթ քնարով . սեղանը տառջ երթավով և Մինուկիսու թագաւորին և ներկայից սիրու զգալու պատրաստած լինելով այլեւայլ երգերով, յանկարծ ծանր և ազգու առմամբ սկսաւ կարմուխնայի երգը՝ սրտաշարժ արտասանութեամբ, աչքերը արտասուօք լեցուած .

« Գնա՞ , թըսիր , ո՛հ սէր ,

Թուիր առ իմըս տէր ,

Լըսեցնել այնոր

Վըշտերու ձայն , որ

Մահ ինձ շուսափոյթ

Բերեն , ո՛հ , անզութ .

Անգութի՝ քանի որ, ահ, մընայ ծածռկ,
իրմէ՛ ոյր համար մաշիմ՝ այս անձուկ։

Պատմէ զու այնոր՝ ջանայ հաւտացնել՝
Զի կեանքս իմ ծաղկէր՝ թէ զնա չէի տեսել։
Ըսէ՛ որ մի որ՝ մի սիկիլուհի
Տեսաւ զինք՝ երբոր ի խաղ եր զէնքի,
Եւ, ըսէ, որ միշտ ըզնա կու յիշեմ,
Յիշեմ ու մաշիմ. . . պատմէ ի՞նչպէս եմ *
Սէր, թէ բան պակսի՝ առ դէմքիս զլծէս։
Այս որ բացատրես՝ ամէն բան կ'ըսես։

Թագաւորն և բազմականք առ հասարակ զբացուած, խորին լրութեամք մտիկ ընելով, յետոյ թագաւորը հարցուց. Մինուկէ, այս ի՞նչ երգ է, ինծի նոր կ'երեւի. — Անտարակոյս, ըսաւ Մինուկիս, զի երեց օր հազիւ կայ որ թէ իմասոր և թէ եղանակը շինուած է, անակնկալ գէպըով մի, զոր քեզ միայն կրնամ յայտնել և ոչ ուրիշ որ եւ է անձի. — Անգանը վերջացածին պէտ՝ խակոյն Գետրոս զՄինոսկիս իւր սենեւակը կը կոչէ, ուր ամէն բան լաւ տեղինանալով, սիրտը կարեկցութեամբ յուզուած, խոստացաւ որ այն օր երեկոյեան դէմ՝ քանի մի մարզով՝ երթայ զինքր տեսնելով և միմիթարելու. Մինուկիսո թագաւորին մարդասիրութեան վրայ սկանչանալով, սրտանց շնորհակալ եղաւ, և իրը ամենամեծ յաջողութեան հասած, շիտակ կարմասինայի քոյլ սլացաւ. Խեթին այս շապասած աւետիսն առնըլով անհամեմատ ուրախութեամբ լեցուած, կարծեն նոյն վայրինենէն օկսաւ առողջութիւն շնչել. իսկ ծնողքն այս ուրախալիք փսփիսութիւնը տեսնելով, սրտանց երախտագէտ կը լինէին Մինուկիսի, ըսելով. Ա՛հ, անինիւ հոզի, զու քու անուշ քնար ու խաղող՝ մեր սիրելի դատիկը մանուանէ կ'աղասես. այն ալ հեղուկ կը ծիծաղէր՝ մատով զԱսուած ցուցընելով. վերջը զանոնք միմիթարելով և կարմասինայի առողջութիւն մազթելով՝ ողլունեց ու մեկնեցաւ. — Արեւանուարի ժամանակ թագաւորը մի քանի ուղեկցօք՝ ձիաւոր՝ թժկին պարափիք քովէն անցնելով, յետ անոր խորին յարգանքն ընդունելու, կարեկցութեամբ ըսաւ. Այնիւ պարոն, կը լսեմ որ միակ զատրիկդ ծանր հիւանդ է, կը փափափիմ զինքը տեսնել ու միմիթարել, զայց ուրախանալով առողջանայ: Ա՛հ, աէր իմ, յարեց բժիշկը, միթէ ասկէ մեծ շնորհք և արախութիւն կրնայ լինել թշուառ ծնողացս. և այս ըսելով տարաւ կարմասինայի սենեակը, մինչդեռ նա անհամբերութեամբ այն վայրիկեանին կը սպասէր կէս մի անկողնի մէջ

* Այս ոտանաւորը՝ մինչեւ հօս՝ Ալիրետի յիշեալ քերդածէն առնըլով Փրան-կիսկա, իւր կիսանդրոյն պատուանդան եղող սեան վրայ քանդակած է, իրու անոր պատմութիւն և բացատրութիւն:

նստած։ Թագաւորը տեսածին պէս տժգյոյն դէմքի վրայ ուրախութեան ժպիս մի փայլեցաւ, այլ իսկոյն ամօթխածութեամբ շառապնելով՝ սկսաւ առջեւը նայիլ։ իսկ Պետրոս յասած անցաւ և եղրօր պէս ձեռքէն բռնելով, խրահուսելով մ'ըսսաւ։ Սիրելի կարմոսինա՝ այս ի՞նչ է, որ քու մատաղ տարիքիդ մէջ փոխանակ առողջ ու գործունեայ աշխատութեամբ ծերունի ծնողքդ միխթարելով։ հիւանդ պառկած՝ զանոնք կը տիրեցրնես։ մի՛ վախեր, արիացիր, յուսանք՝ Աստուած քիչ ատենէն առողջութիւն կու տայ, որ զամէնքս կը տեսնէ, ինամէ ու կը միխթարէ։ և ուրիշ ասոր նման քանի մի խօսքեր այլ ըսելով՝ զոր իրենց միայն կ'իմանային, ծնողքը միխթարելով զնաց։ Այս օրէն հիւանդը մկասա լաւնալ։

Ուրիշ օր մի թագաւորը ուզեց իւր կոստանտինա թագուհոյն և մեծամեծաց հետ սեղան մ'ընել բժկին պարտիզն մէջ, ուր բաւական առողջ կարմոսինա այլ ներկայ էր։ Մերգանի ժամանակ, յետ թագաւորը Միհնուկիոսի նոյն երգը կրկնել տալու, զարձար առ կարմոսինա, և յայտնի ամենուն առջեւ ըստա։ Սիրելի քոյր իմ կարմոսինա, որովհետեւ դու զիս այսշափ սիրեցիր, միշտ կերակրով զոհելու ատիպաւեցար, ես ալ քեզ կը խոստանամ իմ եղայրական սէրս և համբոյրս, հաշակերով զիս կենօսը չափ քու ասպետով, և քու ընտրած զոյներով հազնելով։ իսկ քեզի կենակից ու փեսայ՝ ահաւասիկ իմ ազնիւ հօրաքեռորդին։ — թագաւորին այս խօսքերուն կարմոսինան կարմերով պատասխանեց։ Ցէր իմ, քո խեղճ աղախինդ անհամեմատ շնորհակալ է քու վեհ սրտիդ ազնուութեան, և ամաշելէս գետին անցնելով։ կը լսեմ անարդիս ասպետը լինելուզ փափազը։ իսկ ձեր բարձրութեան զիշանելով ինձ տալի համբոյրը՝ ձեր ազնիւ թագուհոյն յանձնելով, պատրաստ եմ ինձի փեսայ ընդունիլ որ եւ է անձ՝ որ զուք ինձ ցուցընեք։ Այս ըսելով լսեց։ Այս խօսքերը ամենուն ախորդելի անցնելով, զինքը գովեցին։ և սեղանը աւարտելով, թագաւորն և թագուհին՝ երկուքն այլ զինքը մեծ խանզաղատանքով համբուցեցին, և պարզեներ և ամրող աւան մի հարանեաց օժիտ տալով՝ մեկնեցան, իրեն և ծնողաց երջանիկ օրեր մաղթելով։

Փրանկիսկոս իւր գործոյն համար ընարած է այն վայրկեանը՝ երբ կարմոսինան զՄիհնուկիոս թագաւորին կը զրկէ, ինչպէս արդէն սիւնակին վրայ քանդակուած յիշեալ առողերն կը ցուցընեն։ զոր քննենք մէնք այլ քաղելով թարգմանաբար՝ վերջերս հրատարակուած խտական յօդուածէ մի, Ալբերիկ Պինկիաորի։

Կարմոսինան քանդակուած է առանց նախատիպ զանձ օրինակի, նոյն իսկ այն գաղափարական տիսպարէն՝ զոր կերպարանած էր արուեստաորն իւր մշտաց մէջ, և է կիսանդրի մի՝ արժանի երեւելի զրչաց օրինակութեան և ապագայ գարերու զարմանաց առարկայ մ'ընծայուելու, զոր յետ անզամ մի տեսնելու՝ ախօսթելի է կրկին տեսնել։ — Եղյն ընտանեացմէ յառաջ եկող սիկիունոյ մի կերպարանը է, առելի զիրուկ՝ քան նիհար, քիթն՝ կողմնակի նայելով՝ սակաւ մի արծըսունզն և զրեթէ ճակտին ուղղութեամբ ձգուած։

իսկ ճակատն՝ լայն և խաղաղ, երկու կողմերն անձկացած. յիրաւի հակառ
մաքրութեան ։ Գյուին դէպ ի աջ գարձած է, սակա ինչ բարձր, այստերն
թեթեւ մի ճնշուած ։ Բերանն՝ կանոնաւոր, և շրմներն՝ սակա ինչ բա-
ցուած, որով և ոչ զգայասիրի ցոյց, զի այն չէր կարմնուինայի սիրայն շար+
ժին ։ Կղորակ և վերամբարձ կղակն՝ գեղեցիկ կերպով կ'ամբողջացընէ գիմաց
կառարեալ ձուածելու ։ Այդ ինամբով ողորկուած և արուեստորէն ցացած»



Կարմոսինա

գէմիը՝ ամփոփուած է մազերու առաւ պարուրի մէջ, որ կեցրոնական գծէ
մի բամուելով՝ երկուստեղ աշենեւ վար կ'իջնեն և այտերուն փարելով՝ ուսոց
վայ կը հանցին։ Հօս Փրանկիսկոս յաջող զիւա մ'ըրած է՝ նա մազերն
անհարթ և արձակ թողած է, որ կը ցուցընեն կարմնուինայի զինքը գեղեցիկ
երեւցընելու և յարգարանաց անփութութիւնը, մինչդեռ բովանդակ անձը սի-

բոլ կը հաղեր . դիմաց արտայայտութիւնը բոլորսին համանման է Ալփերի թատրերգութեան թողած տպաւորութեան , որով և արձանիս յարգը շատ :

Այսուեանի սոյն գեղեցիկ հրաշակերտի առջեւ կեցած , կը ամենեմք՝ որ կումի հատոք մ'է այդ դէմքը և զորկի ի կենդանութենէ , բայց քաջ և զգայուն արուեստաւորն կը քաջեր է կենդանացընել և անմահացընել իսկ կերպով մի՛ տերդութեամբ , սրանչելի եղանակու բացատրելով ի նմա՞ անոր բովանդակ պատմական գաղանիքը . մոածութեանց սեւեռում , արհամարհութիւնն ամէն մորդիային իրաց , ապաւինութիւն ի ձեռո բազդի և մահացու դարովն , և այս ամենային՝ պատշաճուած տիրող զգաստութեամբ՝ խառն բնածին ամբար-առաւանութեան հետ : Այլ քան զամէնն անշելի զրաւողն է՝ ծանրացած թար-թիշներովն բացատրուած՝ այն մոածութեամբ լի աշաց մելամազնութիւնն :

Ճարտար հեղինակիս այս գործի մէջ զիսելու երկու բան կայ . նախ պա-էերմոցի յունազարմ օրիորդին գաղափարական տիպարն , զոր թափաշխու երե-սկայած , և փրանկ թատրերգուն նկարագրած է , իսկ սա յաջողութեամբ և գեղեցկապէս արձանացուցած , և երկորդ՝ անփօս վշտակրի մի ամենազեղե-ցիկ ներկայացուցում : — Արդի արձանագրուած վրայ ընդհանրապէս իրենց առարկայ՝ բարկութիւն , յուսահասութիւն , կորուստ , ման և նման նիւթեր՝ ընտրելու յօժարութիւն կը տեսնուի . և այս պատճառու արդէն՝ Պալերմոյի ցուցահանդիսին ցանդակագործութեան նուիրեալ սրանքը՝ անշելի կատաղեաց և պատճարաց դարմանացի կը նմանէին՝ քան թէ այն փափուկ արուեստին հանդիսարանի , — զի կը պակսէին ցաւոց և թախծութեանց գուղոր ներկայա-ցուցիք : Սակաւ են սոյն արտեստին խաղաղական , ըսենք , բնադրումն կրող արձանք , և այն սակաւուց մէջ՝ կուցէ ընտրելագոյնն՝ կարմոսինա , այս մար-մացած սեւեռալ զգացումն , որ կու տայ մոածել և նոյն իսկ իւր հետ վշտակրել :

Փրանկիսկոս ունի նաեւ ուրիշ արժանաւոր գործեր այլ . ինչպէս Հերկիւ-չանեա , զօրաւոր կազմուածք ունեցող և հումկու կնոջ մի՛ մղտագյն պղընձէ (bronze) կիսանդրին . որոյ ոչ գծուածքն փափուկ են և ոչ աշք՝ խորուն , այլ անձ մ'է՝ որ ամբարտաւանօրէն կը զբայ թէ զօրաւոր է . այսերն՝ լեցուն , քիթն՝ կլօրակ , շրթունք՝ թանձր , աչք՝ մեծ և թափանցող , ճական՝ սա-կա ինչ ցած , որոյ՝ և զիսոյն վրայի մազերը՝ սեզմ , որը զագաթան վրայ ամփոփուած են : Սոյն կիսանդրոյն վրայ զիսաւոր զիտուած կէտն է՝ կա-նացի գեղեցկութեան և ուժոյ ընափի միախառնութիւնը : Զայս գնած է իւ-տալիոյ ներկայ թագաւորը՝ ի զարդ իւր արգունեաց :

Իւր արդի զօրծերէն մին է և ֆիլորիստա , կճեայ շնորհալի կիսանդրին , որ կը ներկայացընէ կուսական պարզամութեան կամակութիւնը : — Դար-ձեալ մղտագյն պղընձի վրայ օրինակութիւն մի մօսերս վախճանած իշխան գայեթանաս Փիլանգիէրի Սատրիանացոյ կիսանդրյան , որ այժմ՝ զրուած է համանուն թանգարանի որմախորշի մի մէջ . մոազիր խնամնց արդիւնք՝ բա-սկան կենդանի աղումն ունեցող զործ մի : — Յետ ամենայինի յիշենք

այն համբաւաւոր ամբողջ արձանը, որ է Տէր Անտոնի Տոռկանեան. սա, յու մանց քահանայ կարծուած՝ բայց իւր թօսանէ աշխարհական լինել վկայուած է, այն անձն է՝ որ Վիզիէնա ամբոցին առանա ժամանակ՝ վիրալից՝ ինքզինքը ծածուկ մինչեւ վառողանոցը քարշելով, « Դիւցազնաբար վախճանինք » , կ'ըսէ, ու բռնկցընելով՝ ամբոցը հանգերձ յարձըկող ու պաշտպանողներովը յօդ կը հանէ, յամի 1799, յունիս 18. — Ալձանը կը ներկայացընէ զԱնտոն ծնկոց վրայ կորած՝ իրանը գէպ ի առջեւ, տկարութենէն ընկնելու և վառ խանձող մի նետելու գիրքի մէջ . գուրպաները արունից թամբի վրայ օղով ու ճարմանդով աղիսուած են, վարի մասը կօշկով ծածկուած . շապիկը պատառ պատառ, որով կուրծքը, թիկոնքն ու թեւերը՝ գրեթէ մերկ . զօրաւոր անձի մի մարմին, գէմբն՝ արիստիրո ծերու, որ ըմբռնած է այն ինչ կատարելիք մեծ զիւցազնութիւնը, բայց սակաւ մի այլայլած : Զափի թեւն բարձրացած՝ զպիկը կը պատէ, այնպէս՝ որ բազուկն ճակատը ծածկելով՝ ձեռքը բոնցի աջ ականջին վրայ կը հանգչի. այնու բացատրել ու գերլով արուեստաւորն, թէ զիւցազն բոլորովին յինցն կեղոնացած՝ զբաղած է զործը լաւ յաջողցընելու մեծ մտածութեամբ. միով բանի, բովանդակ մարմնոյն դիրքն ու շարժմանքը՝ կրակը ձգելու պատրաստ անձի մի տեսիլ կ'ընճայեն : Բայց մեզ կ'երեւի որ Փրանկիսկոս՝ Տարիէլլոս պատմաբանին յիշած՝ մի մեծ հանգամանքի մտադիր չէ եղած, որով Անտոնի՝ մի քանի զօրաւոր շարժմանը կամ դիրք առած է, մինչդեռ վիրալից և գրեթէ ուժասպառ էր . — այլ և այս զիսողութիւնս մի կողմն թողած, հեղինակի այս գործը՝ միշտ արուեստի կարեւոր հրաշակերու մ'է . որ սահմանուած է՝ իւրու հին անցից յիշատակ՝ յիշեալ ամբոցին աւերակաց վրայ բարձրանալու: Հօս վերջացընենք մենք այլ Փրանկիսկոսի զործոց զրուասիքը, — զոր կընայինք գեռ շատ յերկարել, եթէ ստիպուած շինէինք ասկա՝ իւր աշակերու և հաւասար վայլով վիճնկենոտ եղօքօր վրայ եւս՝ նոյն խօսքերը կրկնել. — զանց ընելով յիշել տնոր միւս ձեռակերաքը, ինչպէս՝ Յաղրանակ Գերմանիկոսի, Վիկտօ, և այլն .

Շարայարելի

Ա.Ց. ԵՒ Ա.Ց.Ք.

—***—

Նոր գիւտ մը. — Եւրոպական լրագիրը կը հազորգեն մեզ՝ թէ մօտերս Սանգիակոյէ գրեթէ երեք հազարամետր հեռու գէպ ՚ի արեւելեան կողմը նուրանոր գիւտեր եղած են. որոնց յիրափ մեծ լցու մի պիտի սփակե՞ն՝ սպանիական արշաւանքէ առաջ Ամերիկոյ մէջ բառաւած ժողովրդոց դրյութեան մասին: Նոյն տեղէն գտուեր են շատ և զանազան կահկարասիներ, կաւելէն անօթներ, ապակելէններ, պտուկներ, որորդութեան և պատերազմի զէն.